



Քաղ. գործ թիվ ՇԴ/0706/02/13

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<21>> նոյեմբերի 2013թ.

ք. Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ	
նախագահությամբ՝ դատավոր	Լիլիթ Խաչատրյանի
քարտուղարությամբ՝	Գայանե Հարությունյանի
մասնակցությամբ՝	
հայցվոր՝	Հ. Կարապետյանի
	Ս. Կարապետյանի
	Մ. Կարապետյանի
հայցվորների ներկ.՝	Ա. Հովսեփյանի
պատասխանողի ներկ.՝	Ա. Գյունաշյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Հրանտ Մարգարի Կարապետյանի (ծնված՝ 31.08.1959թ., անձնագիր՝ AC 0289927, տրված՝ 04.12.1998թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, <<Անի>> թաղ., 15 փող., 7 շենք, բն. 4 հասցեում), Սոնիկ Կարապետյանի (ծնված՝ 22.07.1967թ. անձնագիր՝ AC 0289965, տրված՝ 04.12.1998թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, <<Անի>> թաղ., 15 փող., 7 շենք, բն. 4 հասցեում), Մարգար Հրանտի Կարապետյանի (ծնված՝ 02.01.1987թ., անձնագիր՝ AG 0286329, տրված՝ 23.04.2004թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, <<Անի>> թաղ., 15 փող., 7 շենք, բն. 4 հասցեում) և Դավիթ Հրանտի Կարապետյանի (ծնված՝ 25.11.1988թ., անձնագիր՝ AG 0459461, տրված՝ 01.04.2005թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, <<Անի>> թաղ., 15 փող., 7 շենք, բն. 4 հասցեում) ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի (ՀՎՀՀ՝ 05511159, պետական գրանցման վկայական՝ 002079, հասցեն՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1), ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հովհաննես Հրանտ Կարապետյանը, Սոնիկ Կարապետյանը, Մարգար Կարապետյանը և Դավիթ Կարապետյանը 2013 թվականի հուլիսի 17-ին հայց են ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի՝ Գյումրի քաղաքի <<Անի>> թաղամասի 15 փողոցի 7 շենքի թիվ 4 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջով:

Հայցադիմումը 19.07.2013 թվականին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ընդունվել է վարույթ:
06.08.2013թ. գործով պատասխանող Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան: